

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Շինարարական աշխատանքների համակարգման մասնագետ

Աշխատանքի վայրը, տեսակը, աշխատաժամանակը

ք. Երևան, հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք:

Աշխատանքի նկարագիր

- Համակարգել և վերահսկել ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում Կապալառու կազմակերպության կողմից իրականացվող շինարարական աշխատանքները (խողովակների տեղադրում, դիտահորերի և ջրաչափների տեղադրում և այլն),
- Շինարարական պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկել աշխատանքների ընթացքին, ժամկետներին և որակին վերաբերող հարցեր, անհրաժեշտության դեպքում առաջարկել շտկումներ կամ նախագծային լուծումներ,
- Պարբերաբար այցելություններ կատարել շինհրապարակներ՝ ստուգելու համար կատարվող աշխատանքների որակը,
- Մասնակցել փաստացի կատարված աշխատանքի մասով վճարման վկայականների ստուգման և հաստատման գործընթացին,
- Շինարարական աշխատանքների ընթացքի վերաբերյալ նախապատրաստել զեկույցներ և հաշվետվություններ:

Պահանջներ

- Բարձրագույն կրթություն ճարտարագիտական ոլորտում
- Աշխատանքային փորձը կղիտվի որպես առավելություն
- Կարգապահության և բարձր պատասխանատվության զգացում
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Word, Excel
- Վարորդական իրավունքի առկայություն

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները /CV hr@vjur.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ Շինարարական աշխատանքների համակարգման մասնագետ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 033-14-47-48: Հարցազրույցի կիրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: